**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**N ԿՄՀՔ-ԲՄԱՇՁԲ-25/33**

ք. Հրազդան 14 07 2025թ.

**Հրազդանի համայնքապետարանը,** ի դեմս համայնքի ղեկավար Ս.Միքայելյանի, որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սամի» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հակոբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 01-ը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով :

## 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների ամբողջ ծավալով կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ տեխնիկական բնութագրին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխության և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված հինգ տարի՝: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 122.193.420 (մեկ հարյուր քսաներկու միլիոն մեկ հարյուր իննսուներեք հազար չորս հարյուր քսան) ՀՀ դրամ, որից 20.365.570 (քսան միլիոն երեք հարյուր վաթսունհինգ հազար հինգ հարյուր յոթանասուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

| N | Խախտումը | Պատասխանատվությունը |
|---|---|---|
| 1 | Շինարարական հրապարակից և/կամ տեղամասից հեռացված չեն աղբը, կենցաղային թափոնները և օտար առարկաները (աշխատանքների իրականացման ժամանակահատվածում, ինչպես նաև մինչև շինարարական օբյեկտը սահմանված կարգով շահագործման հանձնելը) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 2 | Տեղամասերում շինարարական աղբը կուտակված է, թափոնները չեն տեղափոխվել հատուկ հատկացված վայրեր | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 3 | Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում առկա չեն սանիտարական պայմաններ | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրը ուժի մեջ է մտնում ֆինանսական միջոց նախատեսվելուց հետո լրացուցիչ համաձայնագրի կնքման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն

լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 5) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Սույն պայմանագիրը կազմված է 20 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 ,N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.16 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քանիհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասն աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 9.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| **Հրազդանի համայնքապետարան** | **«Սամի» ՍՊԸ** |
| ք.Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1 վարչական շենք | ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փակուղի, 8շ., տարածք 3/1 |
| Հրազդանի ՏԳԲ | Բանկը՝ Ակբա Բանկ ԲԲԸ |
| Հ/Հ՝ 900122001440 | Հ/Հ՝ 220583330067000 |
| ՀՎՀՀ՝ 03027114 | ՀՎՀՀ՝ 02672301 |
| ______________ Ա.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ | ______________ Լ. ՀԱԿՈԲՅԱՆ |
| /ստորագրություն/Կ.Տ | /ստորագրություն/Կ.Տ |

*Հավելված N 1*
*14 07 2025թ. կնքված*
*«ԿՄՀՔ-ԲՄԱՇՁԲ-25/33» ծածկագրով պայմանագրի*

# ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ՊԵՏԻԿՅԱՆ, ԴՈՒՐՅԱՆ, ԽԱՉԱՏՐՅԱՆ և ԱՎԵՏԻՍՅԱՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԾԱՎԱԼԱԹԵՐԹԸ

| No | Աշխատանքների և ծախսերի անվանումը | Չափի միավոր | Քանակը | Միավորի արժեքը | Գումարը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | *Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի Ա. Ալավերդյան փողոցի հիմնանորոգում* | | | | |
| | Հողային աշխատանքներ | | | | |
| 2 | գրունտի մշակում 1,0մ3 տարողությամբ էքսկավատորով/բեռնելով ավտոինքնաթափ /III (33г) կարգ | մ$^3$ | 374.30 | 783.23 | 293,162.43 |
| 1 | գրունտի մշակում 1,0մ3 տարողությամբ էքսկավատորով/բեռնելով ավտոինքնաթափ /IVp (13) կարգ | մ$^3$ | 417.30 | 1,013.09 | 422,761.60 |
| 2 | գրունտի մշակում 1,0մ3 տարողությամբ էքսկավատորով/բեռնելով ավտոինքնաթափ /Vp (13) կարգ | 1000մ3 | 247.00 | 1,316.27 | 325,118.46 |
| 3 | Գրունտի տեղափոխում7 կմ լցակույտ | տն | 2,034.71 | 652.63 | 1,327,917.55 |
| 4 | Աշխատանք լցակույտում | մ$^3$ | 1,038.60 | 77.31 | 80,292.43 |
| 4 | գրունտի մշակում 1,0մ3 տարողությամբ էքսկավատորով/կողլիցք /IVp (13) կարգ | մ$^3$ | 10.50 | 858.08 | 9,009.83 |
| 5 | գրունտի մշակում բուլդոզերով մինչև 30 մ տեղափոխումով/ լիցք | մ$^3$ | 10.50 | 728.04 | 7,644.39 |
| 6 | Գրունտի խտացում և ամրացում թրթռագլդոնով, 6 անցումով 25 սմ շերտի հաստությամբ | մ$^3$ | 10.50 | 330.25 | 3,467.67 |
| | Երթևեկելի մաս | | | | |
| 1 | Ճանապարհի հիմքի նախապատրաստական շերտի կառուցում ավազակոպճային խառնուրդով h=12սմ /ГОСТ 23735-79 | մ$^3$ | 289.60 | 10,122.21 | 2,931,391.35 |
| 2 | Հիմքի կառուցում խճակոպճավազային C-5 խառնուրդով h=15սմ ГОСТ 25607-2009 | մ$^2$ | 2,413.20 | 2,228.28 | 5,377,296.72 |
| 3 | Ծածկի կառուցում խոշորահատիկ ասֆալտբետոնե խառնորդով h=6 սմ ГОСТ 9128-2013 | մ$^2$ | 2,413.20 | 6,920.37 | 16,700,226.82 |
| 4 | Ծածկի կառուցում մանրահատիկ Բ տիպի ասֆալտբետոնե խառնորդով h=4 սմ ГОСТ 9128-2013 | մ$^2$ | 2,413.20 | 5,108.18 | 12,327,062.87 |
| | Լայնացումներ | | | | |
| 1 | Ճանապարհի հիմքի նախապատրաստական շերտի կառուցում ավազակոպճային խառնուրդով h=12սմ /ГОСТ 23735-79 | մ$^3$ | 0.14 | 10,122.21 | 1,406.99 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2 | Հիմքի կառուցում խճակոպճավազային C-5 խառնուրդով h=15սմ ГОСТ 25607-2009 | մ² | 116.00 | 2,228.28 | 258,481.03 |
| 3 | Ծածկի կառուցում խոշորահատիկ ասֆալտբետոնե խառնորդով h=6 սմ ГОСТ 9128-2013 | մ² | 116.00 | 6,920.37 | 802,762.44 |
| 4 | Ծածկի կառուցում մանրահատիկ Բ տիպի ասֆալտբետոնե խառնորդով h=4 սմ ГОСТ 9128-2013 | մ² | 116.00 | 5,108.18 | 592,549.02 |
| | Իջատեղեր և մուտքեր | | | | |
| 1 | գրունտի մշակում 1,0մ3 տարողությամբ էքսկավատորով/բեռնելով ավտոինքնաթափ /IVp (13) կարգ | մ³ | 86.72 | 1,013.09 | 87,854.99 |
| 2 | գրունտի մշակում 1,0մ3 տարողությամբ էքսկավատորով/բեռնելով ավտոինքնաթափ /Vp (13) կարգ | մ³ | 115.62 | 1,316.27 | 152,187.03 |
| 3 | Գրունտի տեղափոխում7 կմ լցակույտ | տն | 430.69 | 652.63 | 281,084.83 |
| 4 | Աշխատանք լցակույտում | մ³ | 202.34 | 77.31 | 15,642.57 |
| 5 | Ճանապարհի հիմքի նախապատրաստական շերտի կառուցում ավազակոպճային խառնուրդով h=12սմ /ГОСТ 23735-79 | մ3 | 69.37 | 10,122.21 | 702,177.55 |
| 6 | Հիմքի կառուցում խճակոպճավազային C-5 խառնուրդով h=15սմ ГОСТ 25607-2009 | մ² | 578.10 | 2,228.28 | 1,288,171.41 |
| 7 | Ծածկի կառուցում մանրահատիկ Բ տիպի ասֆալտբետոնե խառնորդով h=5 սմ ГОСТ 9128-2013 | մ² | 578.10 | 6,295.52 | 3,639,437.50 |
| | Մայթեր | | | | |
| 1 | գոյություն ունեցող եզրաքարերի քանդում և բարձում ավտոինքնաթափ | մ | 557.60 | 1,698.09 | 946,852.58 |
| 2 | Գոյություն ունեցող սալվածքի քանդում | մ³ | 3.60 | 30,350.54 | 109,261.95 |
| 3 | շին. աղբի տեղափոխում 10 կմ լցակույտ | տն | 7.51 | 843.65 | 6,335.04 |
| 4 | աշխատանք լցակույտում | մ³ | 14.27 | 77.31 | 1,102.98 |
| 5 | Եզրաքարերի հիմքի ավազախճային նախաշերտ h=10սմ ГОСТ 25607-2009 | մ³ | 31.90 | 13,415.74 | 427,962.03 |
| 6 | Բազալտե 150*300 եզրաքարերի տեղադրում Բ 15 դասի բետոնե հիմքի վրա | մ | 578.20 | 15,934.96 | 9,213,591.39 |
| 7 | Բազալտե 100*200 եզրաշարերի տեղադրում Բ 15 դասի բետոնե հիմքի վրա | մ | 485.30 | 12,308.17 | 5,973,154.78 |
| 8 | Ավազակոպճային հիմքի կառուցում h=10 սմ /ГОСТ 23735-79 | մ² | 699.80 | 1,253.34 | 877,089.33 |
| 9 | Ավազացեմենտային հիմքի կառուցում h=3 սմ 3/1 հարաբերությամբ 699,8մ2 | մ³ | 20.99 | 32,377.04 | 679,723.61 |
| 10 | Մայթի սալիկապատում h=6 սմ բետոնե սալիկներով ГОСТ 17608-2017 | մ² | 699.80 | 9,074.82 | 6,350,556.65 |
| | Կանաչապատում | | | | |
| 1 | Հողի պատրաստում և փխրեցում ձեռքով | մ² | 60.00 | 348.11 | 20,886.45 |
| 2 | Սիզամարգի ցանում ձեռքով 10 սմ հաստությամբ | մ² | 60.00 | 348.11 | 20,886.45 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3 | Սիզամարգի սերմ 2 կգ/100քմ | կգ | 1.20 | 5,450.43 | 6,540.51 |
| | Դիտահորեր | | | | |
| 1 | Գոյություն ունեցող դիտահորերի ե/բ կափարիչների ապամոնտաժում և բարձում ինքնաթափ-2,02մ3 | հատ | 7.00 | 6,230.11 | 43,610.80 |
| 2 | շին. աղբի տեղափոխում 10 կմ լցակույտ | տն | 4.65 | 843.65 | 3,919.58 |
| 3 | աշխատանք լցակույտում | $մ^3$ | 2.02 | 77.27 | 156.09 |
| 4 | Թուջե մտոցով ե/բ կափարիչի տեղադրում 1200*1200 | հատ | 7.00 | 158,346.53 | 1,108,425.70 |
| 5 | Դիտահորերի նիշերի ուղղում Բ 20 դասի բետոնով 7 հատ | $մ^3$ | 0.70 | 80,848.01 | 56,593.61 |
| | Ճանապարհի կահավորում և գծանշում | | | | |
| 1 | Ճանապարհային նշանների տեղադրում /նախազգուշացնող/ | հատ | 4.00 | 49,511.48 | 198,045.92 |
| 2 | Ճանապարհային նշանների տեղադրում /առավելության/ | հատ | 19.00 | 42,249.70 | 802,744.21 |
| 3 | Ճանապարհային նշանների տեղադրում/ հատուկ թելադրանքի/ | հատ | 12.00 | 44,357.19 | 532,286.32 |
| 4 | Ճանապարհային նշանների տեղադրում/ լրացուցիչ տեղեկատվության/ | հատ | 2.00 | 52,540.10 | 105,080.20 |
| 5 | Պողպ. ԽողովակD=57x3,5մմ/ | գմ | 94.00 | 2,997.73 | 281,787.01 |
| 6 | Հենասյուների երկշերտ յուղաներկում ժանգակայուն ներկով | $մ^2$ | 16.82 | 2,110.60 | 35,509.00 |
| 7 | Ճանապարհի գծանշում ճանապարհային ջերմապլաստիկ լուսանդրադարձնող ներկով 3 մմ հաստությամբ/ սպիտակ գույն/ ըստ ԳOUS 51256-2011-ի տիպերի/ | $մ^2$ | 240.40 | 13,928.13 | 3,348,322.27 |
| | ԿՄ 0+067-ում արհեստական անհարթության կառուցում | | | | |
| 1 | Ասֆալտբետոնե ծածկույթի կտրում/աղոցում -23,2մ | $մ^2$ | 3.02 | 4,484.29 | 13,524.60 |
| 2 | Բիտումի տարածում ա/բ ծածկույթի վրա0,3լ/ $1մ^2$ | տն | 0.01 | 321,308.66 | 3,238.79 |
| 3 | Արհեստական անհարության կառուցում h=7 սմ հաստությամբ Բ տիպի ասֆալտբետոնե խառնուրդով | տն | 3.91 | 52,803.57 | 206,461.95 |
| | Ջրահեռացման համակարգի կառուցում | | | | |
| | Ջրընդունիչի կառուցում | | | | |
| 1 | գրունտի մշակում 1,0մ3 տարողությամբ էքսկավատորով/բեռնելով ավտոինքնաթափ /IVp (13) կարգ | $մ^3$ | 1.59 | 1,013.09 | 1,610.81 |
| 3 | Գրունտի տեղափոխում7 կմ լցակույտ | տն | 3.02 | 652.63 | 1,971.60 |
| 4 | Աշխատանք լցակույտում | $մ^3$ | 1.59 | 77.31 | 122.92 |
| 1 | Հիմքի խճային նախաշերտ 20-40 / ГОСТ 23735-79 | $մ^3$ | 0.29 | 11,428.72 | 3,314.33 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2 | Երկաթբետոնեջրընդունիչի կառուցում F-150, W4, B-15 դասի բետոնով | մ³ | 1.11 | 147,528.80 | 163,756.97 |
| 3 | Ամրանային ցանց և ամրանային կապ | տն | 0.13 | 485,882.66 | 65,302.63 |
| 4 | 380*600 Թուջե ցանի տեղադրում ГОСТ 3634-99 | լրակազմ | 3.00 | 151,521.88 | 454,565.63 |
| 5 | Ջրընդունիչ հորերի հիդրոմեկուսացում բիտումային մածիկով | մ² | 8.16 | 1,553.33 | 12,675.19 |
| | դիտահորերի կառուցում 1000*1000 | | | | |
| 1 | գրունտի մշակում 0,5մ3 տարողությամբ էքսկավատորով կողլիցք/Vp) կարգ | մ³ | 2.10 | 892.54 | 1,874.34 |
| 2 | գրունտի հետլիցք մեխանիզմով | մ³ | 1.04 | 904.24 | 940.41 |
| 3 | Գրունտի խտացում և ամրացում թրթրազլդոնով, 6 անցումով 25 սմ շերտի հաստությամբ | մ³ | 1.04 | 179.90 | 187.09 |
| 4 | ավելորդ գրունտի բարձում 0,5մ3 տարողությամբ էքսկավատորով | մ³ | 1.06 | 1,316.27 | 1,395.25 |
| 5 | Գրունտի տեղափոխում7 կմ լցակույտ/պահեստավորում | տն | 2.44 | 652.63 | 1,591.12 |
| 6 | Աշխատանք լցակույտում | մ³ | 1.06 | 77.31 | 81.95 |
| 7 | Դիտահորի ավազային նախաշերտ | մ³ | 0.20 | 10,702.00 | 2,140.40 |
| 8 | Հավաքովի ե/բ դիտահորի տեղադրում 2000*2000/ ГОСТ 8020-2016 /10 հատը 1,01 մ3 | մ³ | 1.01 | 64,205.50 | 64,847.56 |
| 9 | Ե/բ դիտահոր 1000*1000/օղակ | հատ | 1.00 | 51,779.04 | 51,779.04 |
| 10 | Ե/բ դիտահորի տակդիր 1200*1200 /ГОСТ 3634-2019 | հատ | 1.00 | 36,336.17 | 36,336.17 |
| 11 | ե/բ կափարիչի տեղադրում 1200*1200/ГОСТ 3634-2019 | հատ | 1.00 | 149,378.00 | 149,378.00 |
| 12 | Դիտահորի հիդրոմեկուսացում բիտումային մածիկով | մ² | 4.37 | 1,553.33 | 6,788.06 |
| | Ջրհավաք հորի կառուցում | | | | |
| 2 | գրունտի մշակում 1,0մ3 տարողությամբ էքսկավատորով/բեռնելով ավտոինքնաթափ /Vp (13) կարգ | մ³ | 39.30 | 1,316.27 | 51,729.38 |
| 2 | Գրունտի տեղափոխում7 կմ լցակույտ/պահեստավորում | տն | 90.39 | 652.63 | 58,991.44 |
| 4 | գրունտի մշակում 1,0մ3 տարողությամբ էքսկավատորով/կողլիցք /IVp (13) կարգ | մ³ | 29.10 | 1,009.65 | 29,380.91 |
| 3 | Խողովակաշարի պաշտպանիչ շերտ ավազից | մ³ | 4.05 | 7,431.74 | 30,098.56 |
| 4 | Պոլիէթիլենային ծալքավոր խողովակի մոնտաժում d=300մմ | մ | 9.00 | 16,078.27 | 144,704.40 |
| 1 | խճային լիցք (դրենաժային շերտ) 40-70 / ГОСТ 8267-93 | մ³ | 23.50 | 15,197.14 | 357,132.77 |
| 8 | Հավաքովի ե/բ դիտահորի տեղադրում 2000*2000/ ГОСТ 8020-2016 /10 հատը 1,9 մ3 | մ³ | 3.53 | 64,205.50 | 226,645.43 |
| 9 | Ե/բ դիտահոր 2000*2000/օղակ | հատ | 2.00 | 145,344.69 | 290,689.37 |
| 11 | ե/բ կափարիչի տեղադրում 2200*2200/ГОСТ8020-2016 | հատ | 1.00 | 330,659.16 | 330,659.16 |
| 12 | Դիտահորի հիդրոմեկուսացում բիտումային մածիկով | մ² | 13.80 | 1,553.33 | 21,435.97 |
| 7 | գրունտի հետլիցք մեխանիզմով | մ³ | 29.10 | 345.55 | 10,055.61 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 8 | Գրունտի խտացում և ամրացում թրթրազլդրոնով, 6 անցումով 25 սմ շերտի հաստությամբ | մ³ | 29.10 | 330.25 | 9,610.40 |
| | ջրահեռացման գծի կառուցում | | | | |
| 1 | գրունտի մշակում 1,0մ3 տարողությամբ էքսկավատորով/բեռնելով ավտոինքնաթափ /Vp (13) կարգ | մ³ | 25.70 | 1,316.27 | 33,828.12 |
| 2 | Գրունտի տեղափոխում7 կմ լցակույտ/պահեստավորում | տն | 59.11 | 652.63 | 38,577.10 |
| 4 | գրունտի մշակում 1,0մ3 տարողությամբ էքսկավատորով/կողլիցք /IVp (13) կարգ | մ³ | 10.10 | 1,009.65 | 10,197.50 |
| 3 | Խողովակաշարի պաշտպանիչ շերտ ավազից | մ³ | 19.70 | 7,431.74 | 146,405.34 |
| 4 | Պոլիէթիլենային ծալքավոր խողովակի մոնտաժում d=300մմ | մ | 73.00 | 16,078.27 | 1,173,713.47 |
| 7 | գրունտի հետլիցք մեխանիզմով | մ³ | 10.10 | 345.55 | 3,490.09 |
| 8 | Գրունտի խտացում և ամրացում թրթրազլդրոնով, 6 անցումով 25 սմ շերտի հաստությամբ | մ³ | 10.10 | 330.25 | 3,335.57 |
| | *Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի թիվ 70 Ա շենքից դեպի Զ. Անդրանիկի պողոտա հիմնանորոգում* | | | | |
| | Հողային աշխատանքներ | | | | |
| 1 | գրունտի մշակում 1,0մ3 տարողությամբ էքսկավատորով/բեռնելով ավտոինքնաթափ /III (33г) կարգ | մ³ | 248.90 | 783.23 | 194,945.58 |
| 2 | գրունտի մշակում 1,0մ3 տարողությամբ էքսկավատորով/բեռնելով ավտոինքնաթափ /IVp (13) կարգ | մ³ | 304.10 | 1,013.09 | 308,080.05 |
| 3 | գրունտի մշակում 1,0մ3 տարողությամբ էքսկավատորով/բեռնելով ավտոինքնաթափ /Vp (13) կարգ | մ³ | 275.00 | 1,316.27 | 361,974.00 |
| 4 | Գրունտի տեղափոխում7 կմ լցակույտ | տն | 1,658.31 | 652.63 | 1,082,266.74 |
| 5 | Աշխատանք լցակույտում | մ³ | 829.00 | 77.31 | 64,088.61 |
| 6 | գրունտի մշակում 1,0մ3 տարողությամբ էքսկավատորով/կողլիցք /IVp (13) կարգ | մ³ | 274.70 | 858.08 | 235,714.33 |
| 7 | գրունտի մշակում բուլդոզերով մինչև 30 մ տեղափոխումով/ լիցք | մ³ | 274.70 | 728.04 | 199,991.75 |
| 8 | Գրունտի խտացում և ամրացում թրթրազլդրոնով, 6 անցումով 25 սմ շերտի հաստությամբ | մ³ | 274.70 | 330.25 | 90,720.89 |
| | Երթևեկելի մաս | | | - | - |
| 1 | Ճանապարհի հիմքի նախապատրաստական շերտի կառուցում ավազակոպաճային խառնուրդով h=12սմ /ГОСТ 23735-79 | մ³ | 339.90 | 10,122.21 | 3,440,538.40 |
| 2 | Հիմքի կառուցում խճակոպճավազային C-5 խառնուրդով h=15սմ ГОСТ 25607-2009 | մ² | 2,608.40 | 2,228.28 | 5,812,257.90 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3 | Ծածկի կառուցում խոշորահատիկ ասֆալտբետոնե խառնորդով h=6 սմ ГОСТ 9128-2013 | մ² | 2,608.40 | 6,920.37 | 18,051,082.23 |
| 4 | Ծածկի կառուցում մանրահատիկ Բ տիպի ասֆալտբետոնե խառնորդով h=4 սմ ГОСТ 9128-2013 | մ² | 2,608.40 | 5,108.18 | 13,324,179.84 |
| 5 | Կողնակների ամրացում ավազակոպճային խառնուրդով h=10 սմ | մ² | 1,614.80 | 1,174.09 | 1,895,913.22 |
| | Իջատեղեր և մուտքեր | | | | |
| 1 | գրունտի մշակում 1,0մ3 տարողությամբ էքսկավատորով/բեռնելով ավտոինքնաթափ /IVp (13) կարգ | մ³ | 5.03 | 1,013.09 | 5,095.83 |
| 2 | գրունտի մշակում 1,0մ3 տարողությամբ էքսկավատորով/բեռնելով ավտոինքնաթափ /Vp (13) կարգ | մ³ | 6.70 | 1,316.27 | 8,819.00 |
| 3 | Գրունտի տեղափոխում7 կմ լցակույտ | տն | 24.97 | 652.63 | 16,294.27 |
| 4 | Աշխատանք լցակույտում | մ³ | 11.73 | 77.31 | 906.83 |
| 5 | Ճանապարհի հիմքի նախապատրաստական շերտի կառուցում ավազակոպճային խառնուրդով h=12սմ /ГОСТ 23735-79 | մ3 | 4.02 | 10,122.21 | 40,691.27 |
| 6 | Հիմքի կառուցում խճակոպճավազային C-5 խառնուրդով h=15սմ ГОСТ 25607-2009 | մ² | 33.50 | 2,228.28 | 74,647.54 |
| 7 | Ծածկի կառուցում մանրահատիկ Բ տիպի ասֆալտբետոնե խառնորդով h=5 սմ ГОСТ 9128-2013 | մ² | 33.50 | 6,295.52 | 210,899.77 |
| | Ճանապարհի կահավորում և գծանշում | | | | |
| 1 | Պոլիմերային ազդանշանային սյուների տեղադրում (C-1) | հատ | 32.00 | 5,290.67 | 169,301.50 |
| 2 | Ճանապարհային նշանների տեղադրում/ նախազգուշացնող/ | հատ | 2.00 | 49,807.62 | 99,615.24 |
| 3 | Ճանապարհային նշանների տեղադրում /առավելության/ | հատ | 5.00 | 42,249.70 | 211,248.48 |
| 4 | Պողպ. ԽողովակD=57x3,5մմ/ | գմ | 24.50 | 2,997.73 | 73,444.49 |
| 5 | Հենասյուների երկշերտ յուղաներկում ժանգակայուն ներկով | մ² | 4.39 | 2,110.60 | 9,255.01 |
| 6 | Ճանապարհի գծանշում ճանապարհային ջերմապլաստիկ լուսանդրադարձնող ներկով 3 մմ հաստությամբ/ սպիտակ գույն/ ըստ ԳOUS 51256-2011-ի տիպերի/ | մ² | 88.40 | 13,928.13 | 1,231,246.63 |
| | Անցումային խողովակի կառուցում | | | | |
| 1 | Խողովակների ավազակոպճային նախաշերտ /ГОСТ 23735-79 | մ³ | 0.70 | 11,029.02 | 7,720.32 |
| 2 | Մետաղական խողովակների տեղադրում d= 426*6,0մմ ГОСТ 10704-91 | գմ | 14.00 | 66,493.41 | 930,907.77 |
| 3 | Խողովակների հիդրոմեկուսացում բիտումային մածիկով | մ² | 18.73 | 20.74 | 388.41 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 4 | գլխամասերի կառուցում F-150, W4, B-15 դասի բետոնով | մ³ | 2.20 | 131,059.75 | 288,331.46 |
| 5 | Գլխամասերի երկշերտ հիդրոմեկուսացում բիտումային մածիկով | մ² | 8.40 | 1,360.37 | 11,427.08 |
| | <u>*Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի Սպորտդպրոցից դեպի Զ. Անդրանիկի պողոտա հիմնանորոգում*</u> | | | | |
| | Հողային աշխատանքներ | | | | |
| 2 | գրունտի մշակում 1,0մ3 տարողությամբ էքսկավատորով/բեռնելով ավտոինքնաթափ /III (33г) կարգ | մ³ | 89.00 | 783.23 | 69,707.34 |
| 1 | գրունտի մշակում 1,0մ3 տարողությամբ էքսկավատորով/բեռնելով ավտոինքնաթափ /IVp (13) կարգ | մ³ | 101.70 | 1,013.09 | 103,031.05 |
| 2 | գրունտի մշակում 1,0մ3 տարողությամբ էքսկավատորով/բեռնելով ավտոինքնաթափ /Vp (13) կարգ | մ³ | 53.40 | 1,316.27 | 70,288.77 |
| 3 | Գրունտի տեղափոխում7 կմ լցակույտ | տն | 476.25 | 652.63 | 310,816.15 |
| 4 | Աշխատանք լցակույտում | մ³ | 244.10 | 77.31 | 18,870.96 |
| | Երթևեկելի մաս | | | | |
| 1 | Ճանապարհի հիմքի նախապատրաստական շերտի կառուցում ավազակոպճային խառնուրդով h=12սմ /ГОСТ 23735-79 | մ³ | 76.90 | 10,122.21 | 778,397.77 |
| 2 | Հիմքի կառուցում խճակոպճավազային С-5 խառնուրդով h=15սմ ГОСТ 25607-2009 | մ² | 827.40 | 2,228.28 | 1,843,682.79 |
| 3 | Ծածկի կառուցում խոշորահատիկ ասֆալտբետոնե խառնորդով h=6 սմ ГОСТ 9128-2013 | մ² | 827.40 | 6,920.37 | 5,725,910.69 |
| 4 | Ծածկի կառուցում մանրահատիկ Բ տիպի ասֆալտբետոնե խառնորդով h=4 սմ ГОСТ 9128-2013 | մ² | 827.40 | 5,108.18 | 4,226,509.12 |
| 5 | Կողնակների ամրացում ավազակոպճային խառնուրդով h=10 սմ | մ² | 152.70 | 1,174.09 | 179,282.85 |
| | Կանաչապատում | | | | |
| 5 | Եզրաքարերի հիմքի ավազախճային նախաշերտ h=10սմ ГОСТ 25607-2009 | մ³ | 2.14 | 13,151.96 | 28,079.43 |
| 6 | Բազալտե 150*300 եզրաքարերի տեղադրում Բ 15 դասի բետոնե հիմքի վրա | 100մ | 61.00 | 15,934.96 | 972,032.30 |
| 1 | Հողի պատրաստում և փխրեցում ձեռքով | մ² | 66.00 | 348.11 | 22,975.10 |
| 2 | Սիզամարգի ցանում ձեռքով 10 սմ հաստությամբ | մ² | 66.00 | 348.11 | 22,975.10 |
| 3 | Սիզամարգի սերմ 2 կգ/100քմ | կգ | 1.32 | 5,450.43 | 7,194.56 |
| | Դիտահորեր | | | | |
| 1 | Գոյություն ունեցող դիտահորերի ե/բ կափարիչների ապամոնտաժում և բարձում ինքնաթափ -0,58մ3 | հատ | 2.00 | 6,230.11 | 12,460.23 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2 | շին․ աղբի տեղափոխում 10 կմ լցակույտ | տն | 4.60 | 843.65 | 3,880.77 |
| 3 | աշխատանք լցակույտում | $մ^3$ | 2.42 | 77.31 | 187.17 |
| 4 | Թուջե մտոցով ե/բ կափարիչի տեղադրում 1200*1200 | հատ | 2.00 | 149,980.73 | 299,961.46 |
| 4 | Թուջե մտոցով ե/բ կափարիչի տեղադրում 1200*1200 | հատ | 2.00 | 158,346.53 | 316,693.06 |
| | Ճանապարհի կահավորում և գծանշում | | | | |
| 1 | Ճանապարհային նշանների տեղադրում /առավելության/ | հատ | 3.00 | 42,249.70 | 126,749.09 |
| 2 | Ճանապարհային նշանների տեղադրում/ հատուկ թելադրանքի/ | հատ | 1.00 | 44,357.19 | 44,357.19 |
| 3 | Պողպ. ԽողովակD=57x3,5մմ/ | գմ | 11.00 | 2,997.73 | 32,975.08 |
| 4 | Հենասյուների երկշերտ յուղաներկում ժանգակայուն ներկով | $մ^2$ | 1.97 | 2,110.60 | 4,155.31 |
| 5 | Ճանապարհի գծանշում ճանապարհային ջերմապլաստիկ լուսանդրադարձնող ներկով 3 մմ հաստությամբ/ սպիտակ գույն/ ըստ ԳՕՍՏ 51256-2011-ի տիպերի/ | $մ^2$ | 39.90 | 13,928.13 | 555,732.36 |
| | Ընդհանուրը | | | | 147,220,997.43 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
**Հրազդանի համայնքապետարան**
ք.Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
վարչական շենք
Հրազդանի ՏԳԲ
Հ/Հ՝ 900122001440
ՀՎՀՀ՝ 03027114

_______________Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
/ստորագրություն/Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՍԱՄԻ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փակուղի, 8շ.,
տարածք 3/1
Բանկը՝ Ակբա Բանկ ԲԲԸ
Հ/Հ՝ 220583330067000
ՀՎՀՀ՝ 02672301

_______________Լ. ՀԱԿՈԲՅԱՆ
/ստորագրություն/Կ.Տ

*Հավելված թիվ 2*
*14 07 2025թ. կնքված*
*«ԿՄՀՔ-ԲՄԱՇՁԲ-25/33» ծածկագրով պայմանագրի*

**ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի ներթաղամասային փողոցներ (Ա. Ալավերդյան փողոց, Կենտրոն թաղ. թիվ 70Ա շենքից դեպի Զ. Անդրանիկի պողոտա, Սպորտդպրոցից դեպի Զ. Անդրանիկի պողոտայի) | Վերանորոգման աշխատանքների, տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման համար կնքված պայմանագրերից (համաձայնագրերից) վերջինի ուժի մեջ մտնելու օրը | 2026 թվականի դեկտեմբերի 01-ը |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
***Հրազդանի համայնքապետարան***
ք.Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
վարչական շենք
Հրազդանի ՏԳԲ
Հ/Հ՝ 900122001440
ՀՎՀՀ՝ 03027114

_______________Ա.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
/ստորագրություն/Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
**«ՍԱՄԻ» ՍՊԸ**
ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փակուղի, 8շ.,
տարածք 3/1
Բանկը՝ Ակբա Բանկ ԲԲԸ
Հ/Հ՝ 220583330067000
ՀՎՀՀ՝ 02672301

_______________Լ. ՀԱԿՈԲՅԱՆ
/ստորագրություն/Կ.Տ

Հավելված N 3
14.07.2025թ. կնքված
«ԿՄՀՔ-ԲՄԱՇՁԲ-25/33» ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Աշխատանքի անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45231220 | Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի ներթաղամասային փողոցներ (Ա. Ալավերդյան փողոց, Կենտրոն թաղ. թիվ 70Ա շենքից դեպի Զ. Անդրանիկի պողոտա, Սպորտդպրոցից դեպի Զ. Անդրանիկի պողոտայի) | | | | | | | | |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**Հրազդանի համայնքապետարան**
ք.Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1 վարչական շենք
Հրազդանի ՏԳԲ
Հ/Հ՝ 900122001440
ՀՎՀՀ՝ 03027114

_______________Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
/ստորագրություն/Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
**«ՍԱՄԻ» ՍՊԸ**
ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փակուղի, 8շ.,
տարածք 3/1
Բանկը՝ Ակբա Բանկ ԲԲԸ
Հ/Հ՝ 220583330067000
ՀՎՀՀ՝ 02672301

_______________Լ. ՀԱԿՈԲՅԱՆ
/ստորագրություն/Կ.Տ